

3865.

Leopold

Документът е изгравиран върху
върху картон със златни

9(47), "1917"

кн-61

1918

9(47). "1917"
7 - 61

2011-07
24 JAN 2006

ՊԻՍԱՌԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻՎ
ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ № 7

/Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք!

ՆԵՐՀԱԿ

ՊՈՒՍՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ

Գիլ է: 1 թ:



202

ՀՐԱՄԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐծԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՆԻ
ՄՈՍԿՎԱ—1918

9(47) 1917
2 - 61

№ 7 ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼՀԱՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻՒՄ՝ № 7
ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!

ԱԵՐՅԱԿ

300


1522-76



ԹՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ԵԿ

ԹՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ ՏԱԿԻԿԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՍԻՍԱՐԻԱՏԻ

ՄԱՅԻՍ—1918

4314

5214

ՈՌԻՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՏԱԿՏԻԿԱՆ

I.

ՈՌՈՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ և պրոլետարական տակտիկայի
փոքրամասնական ըմբռնումը

«ՈՌՈՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ բուրժուական
յեղափոխութիւն է»: Ելակէտ ընդունելով այս ակ-
սակէտը՝ 1905 թ. մեծ շարժման նախօրեակին սո-
ցիալ-դեմոկրատական կուսակցութեան փոքրամաս-
նական զեկավարները նախազգուշացնում էին պրո-
լետարիասահին գալիք Ժամանակաւոր ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿԱռԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ մասնակցելու մաքից: ՅԵՂԱ-
ՓՈԽՈՒԹԻՒՆԸ, այսպէս էին մեկնարանում փոքրա-
մասնականները, հնարաւոր է միայն բուրժուազիայի
բաղաքան դիկտատուրայի ներքոյ: Տապալելով հին
կիսաֆէոդարական կարգերի մնացորդները՝ յեղափո-
խութիւնը նպաստաւոր ուայմաններ պիտի ստեղծի-
կապիտուլիզմի զարգացման համար և այդ նպատա-
կով պէտք է բուրժուազիայի ծեռքը տայ բաղարա-
կան իշխանութեան դաւագանը:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ չի կարող սրբագործել քա-
ղաքական իշխանութեան որևէ ձև բուրժուազիայի
կամքին հակառակ, քանի որ բուրժուազիան պէտք է
լինի իշխանութեան դալիք տէրը: Բուրժուական յե-

Կ/668 - 68

ՄՈՍԿԻԱ
Տպարան Եղբ. Կ. և Ռ. ՊՈՒՐԵԴԻԵՎՆԵՐԻ
1918

զափոխութեան ընթացքն ու Ելքը չի կարող հակառակ բուրժուազիայի հասարակական իդէալին կապիտալիստական ան կարգերին, որոնց վրայ խարսխւելու է բուրժուական պետականութեան ու մտածութեան վերնաշնչը: Սա նշանակում է՝ բուրժուական յեղափոխութեան ընթացքում պրոլետարիատը պէտք է կռւի ընդդէմ միահեծանութեան և նրա զլիստոր սոցիալական ինսարանի՝ կալւածափրութեան, բայց ոչ երբէք՝ ընդդէմ բուրժուազիայի: Բուրժուազիայի դէմ պրոլետարիատը կարող է կռւել յեղափոխութեան վրայ ունենալիք աղջեցութեամբ բուրժուազիան զիային մրցակցելու իմաստով միայն: Բուրժուազիան զգաելու է օգտագործել պրոլետարիատի յեղափոխական ոյժն իր քաղաքական ազատազրման նպատակով: Կան ոյժն իր քաղաքական ազատազրման նպատակով: Արողեատարիատը պէտք է աշխատի օգտագործել բուրժուազիայի յեղափոխական կարողութիւնը՝ ձառայցնելով այդ յեղափոխական դեմոկրատիալի քաղաքատիալի քաղաքատիան ազատազրման դորձին:

Բուրժուազիան, շեշտում էին փոքրամասնականները, յեղափոխական տարր է, քանի գեռ յեղափոխութեան քաղաքական իդէալը հակադրում է աւատական կարգերի քաղաքական ժառանգութեանը՝ միահեծանութեանը: Պրոլետարիատին վերապահում է միայն ննշում զործ գնել լիբերալ և ռազմական բուրժուազիայի կամքի վրայ՝ նրան յեղափոխութիւնն իր տրամաբանական վախճանին՝ հասցնել համոզելու նպատակով: Պրոլետարիատը չի կարող ինքնուրոյն կերպով առաջ շարժել յեղափոխութիւնը մինչեւ լաղ-

թական վախճան: Պրոլետարիատի քաղաքական գիշտատուրան հակասում է բուրժուական յեղափոխութեան դադարափարին: Անգամ յեղափոխական դեմոկրատիան պրոլետարիատն ու զիւղացիութիւնը յարթող կինի, եթէ համաձայնեցնի իր գործնական քայլերը բուրժուազիայի առաջընթաց քայլերին: Յանձնել իշխանութիւնը յեղափոխական պրոլետարիատի և զիւղացիութեան ձեռքը՝ կնշանակէ նետել բուրժուազիային ռէակցիալի զիրկը, թուլացնել յեղափոխութեան թափը, մատնել նրան պարտութեան: Եւ ընդհակառակը՝ յեղափոխութեան ընթացքը զօրեղ կինի և նրա Ելքը՝ յաղթական, եթէ շարժման մէջ պրոլետարիատը բաւականանայ «քննադատութեան զէնքով», վերապահելով «զէնքի քննադատութիւնը» բուրժուազիային: Զպէտք է «վախեցնել լիբերալներին», չպէտք է «նեղել բուրժուազիային»: Խրամատ ձգելով բուրժուազիայի և պրոլետարիատի մէջ՝ ռէակցիան ձգտում է կղզիացնել յեղափոխութիւնը, միանալով բուրժուազիային, պրոլետարիատուն աշխատելու է կղզիացնել ռէակցիան: Պէտք է քաղաքական զիտակցութիւն ներշնչել բուրժուական դեմոկրատիային, առաջ շարժել նրան, արմատականացնել բուրժուական հասարակայնութիւնը՝ ահա այն պայտաիրի գերը, որ յեղափոխութեան մէջ ստանձնելու է պրոլետարիատը: Եւ սահմանափակւելով իր այս զերով, պրոլետարիատն օգտագործելու է յեղափոխութեան ընթացքն իր յատուկ նպատակների համար՝ շերտաւորելու որպէս ուրոյն հասարակական դաստ-

կարդ և կտղմակերպություն որպէս ուրոյն քաղաքական կուսակցութիւն՝ «Ժայռայիկ օպպոզիցիալի կուսակցութիւն»*):

II

Ինուսական լեղափոխութեան և պրոլետարական տակահկալի մեծամասնական բմբոնումը

Ինուսական լեղափոխութեան և պրոլետարական տակահկալի այս բնորոշման հետ երբէք չեն համաձայնել սոցիալ-դեմոկրատիալի ծախակողմեան հոսանքի ներկայացուցիչները՝ մեծամասնական կարք: Մասնակցել ժամանակաւոր Յեղափոխական Կառավարութեան մէջ մեծամասնականների համար նշանակում էր՝ ներկայացնել ազդ կառավարութեան մէջ պրոլետարիատի ուրոյն շահերը և սպառազինուել յեղափոխութեան սաեղծած քաղաքական օրգանների զակուլ իսկ հականեղափոխութեան յետաշարժ նկրումնէջ իսկ հականեղափոխութեան յետաշարժ նկրումնէջ: Կառավարչական օրգաններից դուրս՝ յեների դէմ: Կառավարչական օրգաններից դուրս՝ յեղափոխական սոցիալ-դեմոկրատիան պարտականութիւն ունի զինել և զեկավարել պրոլետարիատին ոչ միայն «զէնքի քննադատութեամբ» բուրժուազիալին միայն յեղափոխութիւն մզելու նպատակով, այլև յեղէպ յեղափոխութիւն մզելու նպատակով, այլև յեղափոխութիւնն իսկ ապահովելու և ընդարձակելու դիմումով՝ բուրժուազիալից անկախ և բուրժուազիալից դուրս՝ յաղթական մէծամասնականները զարգացնում են «լարաճուն և անընդհատ յեղափոխութեան»:

*.) Հ. Հ. «За два года» (Сборн. стат. из «Икры.») СПБ. 1906 г. I II և «Протоколы Объединенного съезда Р. С. Д. Р. П. Москва 1907 № 153 և շար. А. Мартынов «Две диктатуры» 2 изд. 1918 թ. և 74 շար.

մասնականները, բուրժուական է իր ռուսական սկսածքով, սա նշանակում է ռուսական յեղափոխութեան առաջին շրջանում պէտք է իրագործւի այն ժրագիր տնօմում՝ ը, որ առաջադրելու են յեղափոխութիւնն առաջ մզող ամենից արմատական տարրեր՝ բանուրութիւնն ու զիւղացիութիւնը: Բուրժուական հասարակութեան սահմաններում այդ ժրագիրն իրագործող շարժումը կազմելու է յեղափոխութեան գլխաւոր զապանակը: Սակայն ռուսական յեղափոխութիւնն ունի համաշխարհային իմաստ և պէտք է ունենայ միջազգային անդրադարձումներ: Խորացնելով իր սոցիալական բովանդակութիւնը՝ ռուսական յեղափոխութիւնը կարող է աղդանշան լինել համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան, իսկ համաշխարհային այս յեղաշրջման ազգեցութեան ներքոյ ռուս բուրժուական յեղափոխութիւնը շարժման ընթացքում և շարժման հետևանքով կարող է փոխել իր սոցիալ-տնական բնոյթը և յարատել որպէս սոցիալիստական յեղափոխութիւն: Այս իմաստով էլ մեծամասնականները զարգացնում են «լարաճուն և անընդհատ յեղափոխութեան» (Revolution in Permanence) տեսութիւնը: Ինուսական յեղափոխութիւնը կարող է ստանալ այսպիսի միայն յեղափոխութիւնը է ստանայ այդպիսի բնընթացք և նա պէտք է ստանայ այդպիսի բնընթացք, եթէ անհրաժեշտ է, որ «հին կարգերի» տապալման գործը յաղթական ելք ունենայ: Անդամ ռուս միահեծանութիւնը չի կարող չբանալ իսպառ, եթէ չտապալեն նրա գոյութեան միշտպային յե-

նարանները: Յեղափոխութեան յաղթական ելքի աեսակէաից անհրաժեշտ է, որ իր սկզբնական շրջանում ռուսական շարժումը ստանայ բացառապէս գեմոկրատական օրինտացիա, նախապարաստուի պրոլետարիատի և զիւղացիութեան յեղափոխական դիկտատուրայի համար: Սակայն, անշատ-
ւելով մանր-բուրժուական դեմոկրատիալից, յեղափոխութեան յետին շրջանում սոցիալիստորէն կադ-
մակերպւած ռուս պրոլետարիատը պէտք է լծւի միջազգային պրոլետարիատի յեղափոխական կառքին՝
ծայր տալով նուսաստանի սոցիալիստական յեղա-
շրջանը*):

Վեր հանելով ռուսական յեղափոխութեան միջազգային արժեքը և պայմանաւորելով նրա ելքը միջազգային սոցիալիստական յեղաշրջան ընթացքով, մեծամասնականներն ընդդժում են որա յարակցութիւնը ռուսական յեղափոխութեան բուրժուական սկզբնաւորութեան հետ: Մերժելով բուրժուական յեղափոխութեան մասին փոքրամասնականների ունեցած օրգանական ըմբռնում՝ մեծամասնականները դայիս էին հակազրելու դրան յեղափոխութեան դիմութիկական ըմբռնումն և բառ այլմ որոշելու այն բացարձակ տակտիկական դիմութիկական դիմութիկը, որ վերապահւած է ռուսական շարժման մէջ պրոլետարիատին և իր կուսական շարժման մէջ պրոլետարիատին և զիւղացիութեան յեղափոխական սոցիալ գեմոկրատիա-

*) Вл. Ильин „За 12 лет“ т. I СПБ. ст. „Две такти-
ки с. д. в демократич. революции“. չոր. Н. Троцкий „На-
ша революция“ СПБ. 1906.

յին: «Նոր «Անկրա»-ի կողմնակիցները (իմա' փոքրա-
մասնականները), գրում է տարիներ առաջ մեծամաս-
նականների առաջնորդ լենինը, հիմնովին սխալ են
հասկանում բուրժուական յեղափոխութեան իմաստը:
Նրանց գտառողութեանց մէջ շարունակ այն միտքն
է յայտնում, որ իրը բուրժուական յեղափոխու-
թիւնն այն յեղափոխութիւնն է, որ կարող է շա-
հաւետ լինել միայն բուրժուազիյն: Սակայն ոչինչ
կարող աւելի սխալ լինել, բան՝ այս: Բուրժուա-
կան յեղափոխութիւնն այն յեղափոխութիւնն է, որ
գուրս չէ գալիս բուրժուականութեան, այսինքն կա-
պիտայիզմի հասարակական-տնտեսական կարգերի սահ-
մանից»*): Յեղափոխութիւնը, նշանակում է, պիտի ճա-
նապարհ հարթի կապիտալիզմի աղաւու արագ զար-
գացման համար միտքն. նա պիտի ննարաւոր գարձնի
կապիտալի ինտենսիվ կենարունացումն ու անումը: Այդ
առումով յեղափոխութիւնը շահաւետ է բուրժուա-
զիյին, որպէս դասակարգի, բայց ուս գեռ՝ մ
նշանակում, թէ նա շահաւետ պէտք է լինի այդ դա-
սակարգի իւրաքանչիւր առանձին ներկայացուցչին առհասարակ:
Պետական իշխանութեան լիակատար՝ գեմոկրա-
տացումից լիշտոյ իշխանութեան օրգանները՝ չեն կարող
կիրառել որպէս բանորական շարժումը ննշող գոր-
ծիքներ: Բուրժուազիան չի կարող ալեւս յոյս գնել
ուստիկանութեան, զորքի և բիւրոկրատիայի աշակ-
ցութեան վրայ. նա յոյս կարող է ունենալ միայն իր

*) Вл. Ильин ibid եր. 410.

տնտեսական դիմացկունութեան վրայ, իրան արամադարելի արտադրական ուժի գորգացման ու կատարելագործման վրայ: Այսպիսի դրութեան հետ չեն կարող հաշուել բոլոր կապիտալիստները կամ՝ իւրաքանչիւր կապիտալիստ. սակայն դրան հարկադրւած ու կարող կլինին համակերպւելու կապիտալիստների վերին շերերը: Լիակատար քաղաքական դեմոկրատացումը, որ գիւղացիութեան և պրոլետարիատի ծեռքը պիտի տալ յեղափոխութեան քաղաքական հեղեմոնիան, կնպաստէ այսպիսով խոշոր արդիւնաբերութեան յաղթանակին, թէե դա կարող է և շահաւետ չլինել առանձին կապիտալիստների մասնաւոր ինտերեսների տեսակէտից:

Դուրս չգալով կապիտալիստական կարգերի սահմանից՝ բուրժուական յեղափոխութիւնը կարող է ստանալ և այնպիսի ընթացք, որ ցան՛ալի է խոշոր առետրա-արդիւնաբերական, ֆինանսական ու կալւածատիրական դաստկարգերին և այնպիսին, որ ծեռնուու է պրոլետարիատին ու գիւղական չքաւորութեանը: Ոչ թէ պրոլետարիատը պէտք է շահաւետ լինի յեղափոխութեանը, ալլ՝ յեղափոխութիւնը պրոլետարիատին, անհրաժեշտ է, — զրում էր մօտ քառորդ գալ սրանից առաջ առաջ պրոլետարիատի երեսնի առաջնորդ Պլեխանովը, — որ ճառանալով տիրող կարգերի գէմ, ժողովուրդը քաղաքական իրաւունքն եր ծեռը բերի իր համար և «չ քաղաքական ծեռը բերի իրեն շահաւեր ծողների արտօնութիւններ իրեն շահաւեր ծողների

համար»*): Պրոլետարիատը չի կարող յեղաշրջել հին կարգերն ունեւորների համար՝ իր չքաւորութեան վրայ արտնջալու իրաւունքը նւիրագործելու դիտումով: Պրոլետարիատը պէտք է հանդէս գայ բուրժուական յեղափոխութեան մէջ ամենից ւրմատական ծրագրով, որովհետեւ նա ամենից շատ է շահագրգուած կապիտալիստական կարգերի լիակատար յաղթանակով ու ամենից յեղափոխական տարրն է բուրժուական յեղափոխութեան մէջ: Եւ ընդհակառակը, որքան աւելի հասունացած հասարակական-արնական միջավայրում է տեղի ունենում բուրժուական յեղափոխութիւնը, որքան աւելի վճռական դեր ունի կատարելու դրա մէջ պրոլետարիատը նոյնքան աւելի երերուն են և տարած բուրժուագիայի քայլերը, նոյնքան աւելի շեշտած նրա հակումները՝ համաձայնութիւն կնքելու ու էակցիայի հետ, փարելու քաղաքական մի այնպիսի սահմանադրութեան, որ շահաւետ լինելով բուրժուագիայի դաշտում ասկարգային տիրապետութեանը, միաժամանակ արգելներ է ստեղծում հասարակութեան լայնածաւալ ու արագընթաց զարգացման առաջ: Ուսւ յեղափոխութեան պատմական նախապայմաններն այդ տեսակէտից նպաստուոր հանգամանքներ են ստեղծում հակալեղափոխական (համաձայնութեան) համար: Հասկանալի է, որ այս կացութեան հետ չի կարող հաշտւել պրոլետարիատը, ուսւ հասարակու-

*.) „О задачахъ социалистов в борьбе с голодом в России“ 1892 հր.” „Пролет.“ Էջ 59.

թեան այն տարրը, որ ամենից շատ է շահագրգռւած հին հասարակութեան ծոցու թաղնւած արագրաւական ուժերի լիակատար զարդացմամբ: Եւ հասկանական է, թէ ինչու նրա մասնակցութիւնը բուրժուական յեղափոխութեանը, պէտք է լինի, աւելի զործօն ու վճռական քան ոուս հասարակութեան միւս դասակարգերինը:

III.

Պրոլետարիատը և բուրժուական յեղափոխութիւնը

Թէ ինչպէս և ինչ չափով են մասնակցում բուրժուական յեղափոխութիւններին հասարակութեան գեմոկրատական հատ ածները՝ կախւած է հասարակական տնտեսութեան զարդացման աստիճանից, հասարակական դաստկարգերի ուրովն փոխյարաբերութիւնից: Բաւական չէ վոքրածասնականների բերանով կրկնել, որ վերջին դարերի խոշոր յեղափոխական շարժումները կրել են բուրժուական բնութ: Պէտք է խելամուտ լինել արտադրական ոյժերի և հասարակական յարաբերութիւնների այն պատմական դասաւորութեանը, որ ծայր է տալիս յեղափոխական շարժմանը: Բուրժուական անդրանիկ յեղափոխութեան, նիդերլանդեան շտատների ապստամբութեան ժամանակ պրոլետարիատը ոչ միայն իր առանձին տեղը չունէր բաղաքական իրադարձութիւնների մէջ, այլ և բայցակայում էր իսպառ որպէս պատմական գործօն: Նիդերլանդեան բուրժուազիայի ոյժը

յենուամ էր առետրական կապիտալի վրայ, գեռ չկար ասպարիզում արդիւնաբերական այն գեմոկրատիան, որ նոր գարերի յեղափոխութեան դիսաւոր շարժիչն էր գառնալու: Նման սոցիալական միջավայրում կատարւեց նաև անգլիական մեծ յեղափոխութիւնը: 1648 թ. անգլիական բուրժուազիան կուռմ էր բացարձակ միապետութեան, ֆեոդալիզմի և կղերականութեան դէմ: գաշնակցելով նոր ազնւականութեանը, յեղափոխութեան ասպարիզից ընդդիմագիր այս դասակարգերին ու էակցիայի գիրկը նետեց մանր-բուրժուական տարրերի վրայ յենւած նրոնվելի գինւորական դիկատուրան, յեղափոխական պրոլետարիատը, յանձին այն կուսակցութեան, որին զեկավար հանգիսացաւ կոմունիստ Զոն Լիլլուրնը, ոչինչ մասնակցութիւն չունեցաւ բաղաքական իշխանութեանը և սահմանափակւեց ընդդիմագիր աղանդաւորութեան գերով: Անգլիական պրոլետարիատը կազմւած էր զլիաւորապէս զիւղական բատրակներից: Նա չէր կարող յեղափոխութեան մէջ խաղալ այն գործօն գերը, որ վերապահւած էր յետակայում խորոշ արդիւնաբերական կենտրոններում խոսացած բանւորութեանը: 1789 թ. Քրանսիական բուրժուազիան միանում է գեմոկրատիալին՝ ընդդէմ թագւորի, եկեղեցու և տիրող աղնւականութեան: «Երրորդ դասի» թոյլ շերտաւորման հետեանքով պրոլետարիատը կազմեց նախ բուրժուազիայի և ապա մանր-բուրժուական գեմոկրատիալի արիերգարդին: 1830 թ. յուլիսեան յեղափոխութեան մէջ պրոլե-

տարիատը կազմում է արդէն բարրիկադների վրայ պալքարող գեմոկրատիայի աւաճ՝ շարդը, իսկ 1848թ. փետրւարին յեղափոխութիւնը լաղթում է սոցիալիզմի դրօշի տակ և իր զարգացման առաջին շրջանում հիմք դնում «սոցիալական հանրապետութեան»: Բուրժուական յեղափոխութիւնների շարքը ֆրանսիակում փակւեց 1871 թ. Փարիզի կոմմունայով յեղափոխական պրոլետարիատի բաղաքական դիկտուատուրայի ներքոյ: Կոմմունան ներկւեց պրոլետարիատի արիւնով, սակայն յեղափոխական կոմմունայի միջոցով էր, որ ապահովւեց երրորդ հանրապետութեան գոյութիւնը:

Այսպիսով, հասարակական ոլժերի ուրոյն փոխարարերութեան շնորհիւ, բուրժուական յեղափոխութիւնների մէջ շարժման առաջ մղիչ ոլժն անպայման բուրժուագիան չէ, այլ յաճախ գեմոկրատիան պրոլետարիատը, գիւղացիութիւնը և բաղաքային մանր-բուրժուագիան: Յեղափոխութիւնների ընթացքում առաջացող ժամանակաւոր կառավարութիւնները՝ ենթարկելով պրոլետարիատի կամ մանր-բուրժուական գեմոկրատիայի գերիշխանութեանը՝ որպէս յեղափոխական օրդաններ կոչւում են ապահովելու յեղափոխութեան անմիջական լաղթանակը, խեղպելու հակա-յեղափոխական շարժման վերահաս վաճառքը և ոչ՝ գործադրելու բուրժուագիայի բաղաքական տիրապետութիւնը ու այդ միջոցով իրագործելու կապիտալիզմի պատմական միստիան: Միայն յեղափոխական գեմոկրատիայի վճռական այս միջամտութեան

շնորհիւ է, որ սպառնացող ու էակցիան, կորցրած լինելով աւեական տիրապետութեան բաղաքական և տնտեսական ապահով յենակէտները, հարկադրուում է համակերպւելու արտադրական ոյժերի զարգացման ընթացքին և հասարակական յարաբերութիւնների ու էականական ապահով յեղափոխութեան պատմական ապահով յանձները: Հետապնդելով ուրոյն գասակարգային շահեր, նպատակների զիալքերաբական հակագրութեան օրէնքով բուրժուական յեղափոխութեան ընթացքում հասարակական ծագրակեղ բնեուները առարկադորէն հասնում են միկնոյն պատմական արդիւնքին, յեղափոխական և հակազեղափոխական ոյժերի բաղխումով է, որ վերջին հաշով ստեղծւում է բուրժուագիայի դասակարգային տիրապետութիւնն ապահովող բաղաքական «ապատութիւնը»:

„Neue Rheinische Zeitung“-ում զետեղած մի յօդւածում, բնորոշելով անզիփական և ֆրանսիական յեղափոխութիւնների ընթացքը, կարլ Մարքսը զբաւմ է «Երկու յեղափոխութիւնների մէջ բուրժուագիան այն գասն էր, որ իր օք գլուխ էր կանգնած շարժման: Պրոլետարիատը և բաղբենիութեան այն մասը, որ չէր յարում բուրժուագիային, կամ չունէին բուրժուագիայի շահերից տարբերուղ շահ կամ չէին ներկայանում որպէս ինքնուրոյն գասակարգի առորարաժանումներ: Ուստի, նոյնիսկ այնտեղ, որտեղ նրանք դուրս էին գալիս բուրժուագիայի գէմ, ինչպէս օր. 1793-94 թ. թ. Ֆրանսիայում, նրանք կուռում էին

այսուամենալիւ յօդուտ բուրժուակիայի, թէև՝ այլ
միջոցներով։ Ամբողջ ֆրանսիական տերրորն այլ
ինչք, քան բուրժուազիայի թշնամիների՝ արտո-
լիւակիզի, ֆեոդալիզմի և քաղենիութեան գէմ ուղ-
ղւած կուի պլեբէյական եղանակով^{*)}): Բնորոշելով բո-
լոր նախընթաց յեղափոխութիւնների նները որպէս հասա-
րակական փոքրամասնութիւնների յեղափոխութիւնն
ֆր. էնդելսը նկատում է՝ «նոյնիսկ այն գէպըում,
որ գրանց մէջ մեծամասնութիւնն էր մասնակցու-
թիւն ունենում, տեղի էր ունենում այլ—դիտակցօրէն
թէ անդիտակցարար—միայն յօդուտ այս կամ այն
փոքրամասնութեան. շնորհիւ դրան, կամ հէնց շնոր-
հիւ մեծամասնութեան կրաւորական դիրքի, փոքրա-
մասնութիւնը թւում էր ժողովրդի ներկայացու-
ցիչ^{**)}): Նոյն միտքն է ձեւակերպում էնդելսը նաև
մի այլ աեղ, որտեղ նա անդիտական մեծ յեղափոխու-
թեան բուրժուական բնոյթն է շեշտում՝ «որպէսզի
բուրժուազիան կարողանար քաղել յաղթութեան
ամենից հասուն պտուղները, անհրաժեշտ էր, որ յե-
ղափոխութիւնը հեռանար այն նախնական նպատա-
կից, որ առաջադրել էր իրան. նիշտ նոյնը կա-
տարւեց 1793 թ. Ֆրանսիայում և 1848 թ. Գեր-
մանիայում: Հստ երկոյթին սա բուրժուական հա-
սարակութեան զարգացման իրական օրէնքներից
մէկն է»^{***)}:

^{*)} „Das litterarische Nachlass v. K. Marx, Fr. Engels und
F. Lassalle“ herausg v. F. Mehring III p. 211.

^{**)} „Die Klassenkämpfe in Frankreich 1848 bis 1851 v. K.
Marx“. Einleitung p. 7.

^{***)} „Die Neue Zeit“ 1892—93. B. I p. 43 i.

IV.

Յեղափոխութեան հասարակութեան նախապահայններն ու պրոլե-
տարիատի յեղափոխական տակտիկան նուսառանում



41668.68
12226

Բուրժուական հասարակութեան զարգացման
այս «իրական օրէնքն» է հէնց, որ անդիտանում էն
յեղափոխութեան օրդանական տեսութեան հեղինակ-
ները՝ փոքրամասնականները: Խուսական շարժման
առանձնայտուկ պայմանները ոչ միայն չեն թու-
լացնում Մարքսի և էնդելսի դիտած օրէնքի ընդհա-
նուր նշանակութիւնը, այլև, ընդհակառակն, աւելի
են ընդարձակում նրա աղդեցութեան պատմական
սահմանները:

Խուս միահեծանութիւնը, որպէս վարչական,
զինւորական ու ֆինանսական կազմակերպութիւն
XIX դարի բնթացքում խասցնում էր իր մէջ մի
այնպիսի հոկայական ոյժ, որի գէմ անզօր պիտի լի-
նէր անարոյս բուրժուազիալի քաղաքական լիբէրա-
լիզմը: Խուսական կապիտալիզմը մանր բուրժուա-
կան տնտեսութեան այն հարազար աղբիւրներից չէր
առաջացել, որոնցից սկիզբն առաւ կապիտալիզմն արև-
մուտքում: Արհեստաւոր գասակարգը, բուրժուական
յեղափոխութիւնների կարևոր այդ տարրը, չկենարո-
նացու քաղաքներում, այլ, մնալով հողագործ հա-
մայնքի ծոցում, կազմեց գիւղական տնտեսագործու-
թեան հասարակական հիմքը: Քաղաքներում կենարո-
նանում է օտար կապիտալը և, դրան զողընթաց՝
պրոլետարական այն զանգւածները, որ ապրում են

բանորական աշխատավարձով: Կապիտալիզմն ուղղութիւն է տալիս երկրի հարակական-անտեսական զարգացմանը, բայց իւր գերազանցօրէն արտասահման է ան է ան է ան ծագման հետևանքով, անմիջական աղղեցութիւն չի ունենում երկրի քաղաքական կեանքի վրայ. այստեղից անհամաչափ յարաբերութիւն է առաջանում կապիտալի անտեսական արժեքի և նրա քաղաքական կշռի մէջ: Պրոլետարական զանգւածների ոլժի և աղղեցութեան անումը չի համապատասխանում մանր-բուրժուական դեմոկրատիայից կտրւած աղղալին-պատմական խոր արմատներից զուրկ փորբարանակ բուրժուազիայի դաստիարակչին շահերին սպասաւորող լիբերալիզմի անմանը: Հասկանալի է, թէ ինչու նման պայմաններում ուսւուրութուաղիան չէր կարող, անգամ եթէ նա կամենար, կուան լինել այն պայքարին, որ կապիտալիստական աղաւ հանրակարդ պիտի հաստատէր Ռուսաստանում: Դառնալով օտար կապիտալին՝ նրա ներկայացուցիչները ուսւու յեղափոխութեան մէջ ոչ միայն դրական դեր չունեին կատարելու, այլև, ընդհակառակը, Փինանսական ու քաղաքական սպատարը հանդիսանալով ուսւու միահեծանութեան՝ շահագրգուած պիտի լինէին վերջինիս յաղթանակով: «Ժամանակակից կառավարութիւնները—զրում էր երբեմն կ. կառուցկին—ամենուրեք միայն կապիտալի գործակալներն են, սակայն ուսւու միահեծանութիւնը գործակալն է արտասահման է ան կապիտալի: Սա Եւրոպական Փինանսական աշխարհի ներկա-

յացուցիչն է ուսւ ժողովրդի հանդէպ, որին քերթում է Եւրոպական ֆինանսիստներին առիւծի բաժին հանելու համար: Եւ հէնց սրա մէջն է մասամբ նաև ժամանակակից ուսւ կառավարութեան ոլժը»*): «Գերմանական գաւուլու-ի» դէմ ձեռնարկած «ազատագրական պատերազմը» ոչ միայն չիրիկց ուսւ ժողովրդին Փինանսական կապիտալի ոսկէ շղթաներից, այլ աւելի ևս ամբայցրեց անտեսական և քաղաքական սորկութեան օտար կապանքները: Պատերազմի հարւածներից վլւեց ուսւ միահեծանութեան խարխուլ շէնքը, սակայն «ազսո» Խուսաստանը շարունակում էր գեռ անքալ արտասահմանեան կապիտալի ծանր բեռի տակ: Քանի որ ազատութեան ուկալ գրաւականը («հին կարդերի») ուսւսական արտայայտութեան՝ միահեծանութեան՝ ատապալումի մէջ չպէտք էր վնասուել, այլ՝ այդ կարգերի արտասահմանեան պատւանդանի՝ Փինանսական կապիտալի՝ համաշխարհային պարտութեան հեռանկարի մէջ:

Ուսւսական շարժումը, միւս կողմից, տեղի ունէր կապիտալիզմի զարգացման աճապէս բարձր աստիճանի վրայ, որին չէր հասել Արևմտեան Եւրոպան բուրժուական անդրանիկ յեղափոխութիւնների ժամանակ: Նման պայմաններում առաջացած հասարակական ոլժերի փոխարարելութիւնը, բուրժուական հասարակութեան դաստիարագային շերտաւորումն ու պակարը՝ պիտի գար իր հերթին ընդարձայնելու լիբերալիզմի

*.) „Die Neue Zeit“ 1905—6, В. I № 21 և նոյն հեղինակ
„Демериканскій и русскій рабочій“ изд. „Знамя“ 1906. № 9.

յեղափոխական կարողութիւնը և պրոլետարիատի յեղափոխական շարժմանը սալու աւելի գիտակից և կազմակերպւած բնոյթ, Կապիտալի և աշխատանքի ներքին հակամարտութիւնը պիտի դար դէպի ռէակցիան հրելու բուրժուազիային և առաջ մղելու պրոլետարիատին դէպի դէմոկրատական և սոցիալիստական յեղաշրջում: Ուուս պրոլետարիատը պիտի իրադրութէր իրան առաջադրւած նպատակներից մօտաւոր՝ դէմոկրատական յեղափոխութիւնը՝ զինակցելով յեղափոխական գիւղացիութեանը և ապա՝ պիտի դիմէր իր նպատակներից հեռաւորի՝ սոցիալիզմի իրականացմանը՝ ապաւինելով միջազգային պրոլետարիան յեղափոխութեան բռնկմանը: Երկու դէպութ էլ ռուսական յեղափոխութեան առաջխաղացման և դարձացման հանդամանքները հիմնովին ապրերւում են բուրժուական յեղափոխութիւնների աւանդական շաբլոնից:

Գիւղացիութեան աղատազրումը՝ հողային խնդրի լուծումը՝ Անդիայում և Թրանսխայում կատարւեց նախ քան իշխանութիւնը կանցնէր յեղափոխական դէմոկրատիալին՝ պրոլետարիատին ու մանր բուրժուազիալին: Երբ վերջիններս իշխանութեան գլուխ անցան, զիւղական չքաւորութիւնը, արդէն իսկ ամրացած աղատ հողաբաժիններին, մատնեց յեղափոխութիւնը ցեղարիստական և արտիլիւտիստական ռէակցիալի գիրկը: Ուուս բուրժուազիան, ընդհակառակը, անկարող է լուծել հողային խնդիրը իր ախրապետութեան շրջանում: Բանկային հիմնարկու-

թիւնների միջացով նա ինըն է հէնց, որ շահագործում է զրաւ գրած հողերի մի խոշոր մասը, իսկ ֆինանսական կապիտալի զարգացման ընթացքն առնասարակ պիտի դար դէռ աւելի սերտօրէն շաղկապելու իրար հետ հողային և փողային արխատոկրատիալի շահերը և հակազրելու գրանց գիւղական և քաղաքային չքաւորութեան շահերին: Ուուս անհող և սակաւահող գիւղացիութեան բախտն այսպիսով կապւած պիտի լինէր դէմոկրատական յեղափոխութեան հետ, սոցիալական այն շարժման հետ, որին զեկավար էր հանդիսանալու յեղափոխական պրոլետարիատը:

Դասակարգային ռուրոն շահերի գիտակցութեամբ և յեղափոխական ռուրոն կազմակերպութիւնների տուանորդութեամբ կուի դաշտ նետող ռուս պրոլետարիատը, զօրտցած գիւղի յեղափոխական մասսաների աշակցութեամբ, պիտի լուծեր իրան առաջադրւած մօտաւոր պատմական միսսիան, անշուշտ «այլ միշոցներով», բան «գիմագիր» բուրժուազիան: «Պրոլետարիատը—դրում էր գեռ 1902 թ. Երիտասարդ Լենինը—մեր առջև գրել է մի այնպիսի մօտաւոր խնդիր, որ ամեն այլ գագաթ ու անն է այն մօտաւոր խնդիրներից, որպիսին զրւած է եղել որեւէ երկրի պրոլետարիատի առջև: Այդ խնդրի լուծումը, ոչ միայն եւրոպական, այլ (կարող ենք ասել այժմ) ասիական ռէակցիալի ամենից զօրեղ պատւարի կործանումը՝ կդարձնէր ռուս

պրոլետարիատին միջազգային յեղափոխական պրոլետարիատի աւանդարձը»^{*)}:

Ոռուս բանւորական շարժման այսպիսի բմբոնումով էր, որ դեռ 1905 թ. յեղափոխութեան նախօրեակին, պատմական հունի մէջ մտաւ յեղափոխական պրոլետարիատի կուսակցութիւնը, մեծամասնական այն հոսանքը, որ այնքան վճռական դեր պիտի ստանձնէր յետակայի իրազարձութեանց մէջ:

V.

Փետրւարեան յեղափոխութիւնը և մեծամասնականների նիւտեսութիւնը

1905—1906 թ. դէպքերից մինչև 1917 թ. փետրւարեան յեղափոխութիւնը մեծամասնական հոսանքը զարգացման երկար շրջան է անցել: Ֆինանսական կապիտալի զարգացման ընթացքն ու զրամասին եղած տեսութիւնները, իմպերիալիստական պատերազմն ու դրա շնորհիւ ոռուս յեղափոխական շարժման համար ստեղծւած դժւարին ու բարդ կացութիւնը, Երկրորդ ինտերնացիոնալի անկումը և այն մարտական նպատակները, որ ստեղծւած պայմաններում գրել էր իրան միջազգային պրոլետարիատի միակ հաւատարիմ գրօշակակիրը՝ ծախտակողմեան Ցիմմերվալդը՝ այս բոլորը չեր կարող չանդրադառնալ ոռուս յեղափոխական սոցիալ-դեմոկրատիալի քննադատական մաքարդի վրայ, չեր կարող չառաշացնել ծրագրային և տակարկական մի շարք խնդիրների վերա-

^{*)} В. Ильин. ն. ա. 6 եր 204.

դնահատման պահանջ: Սակայն մեր օրերի անցքերն ու դէպքերն են հէնց, որ դալիս են ոչ միայն ծշտելու ոռուս յեղափոխութեան մասին մեծամասնականների առաջարայնելու պրոլետարական տակտիկայի այն բնդհանուր գիծը, որով ընթացել է անցեալում և, համակերպւելով պատմական նոր պայմաններին, ընթանում է նաև այսօր յեղափոխութեան մեծամասնական հոսանքը՝ ներկայիս կոմմունիստական կուսակցութիւնը:

Սարսափած 1905 թ. բանւորական շարժման ուրուականից, մեր օրերի ոռուս բուրժուազիան ոչ թէ սուած պիտի մղեր յեղափոխութիւնը, ալյ լաւագոյն դէպքում, պիտի գլուխ խոնարհեր կատարւած վաստի տուաչ, հաշտւեր ստեղծւած զրութեան հետ: Լենինը դեռ 1906 թ. մարտին էր նախատեսնում այն, ինչ պիտի կատարւեր ուղիղ տասն և մէկ տարի յետով: «Եթէ պրոլետարիատն ու գիւղացիութիւնը յաղթող դուրս գան ապստամբութեան ժամանակ՝ զրում է իր աշխատութիւնների մէջ մեծամասնականների պարագլուխը՝ կաղետական Դուման մի բանի բովէում կյարի յեղափոխական կառավարութեան այն մանիֆեստին, որով համաժողովրդական Հիմնադիր ժողով է հրաւիրւելու»^{*)}: Եւ իրօք, յանձին Դումայի, բուրժուազիան խոնարհւեց ժողովրդի յեղափոխական կամքի անդրանիկ արտայալառութեան առաջնադարեց յեղափոխութեան

^{*)} Н. Ленин. „Победа кадетов и задачи рабочей партии“ СПБ. 1906. № 40.

ընթացքն այնքան ժամանակ, որքան դա ուղղւած էր «հին կարգերի» չէմ: Բուրժուազիան կարող էր նոյնիսկ «համաժողովրդական հիմնադիր Փողով» հրաւիրող յեղափոխութեան զլուխն անցնել», բանի դեռ յեղափոխութեան սոցիալիստական խորացման գէմ մաքառելու, նրա պրոլետարական «շեղումները» կանխելու տեսակէտից, այդ կարող էլլիներ պարարի միակ խելացի միջոցը: Եւ վերջապէս՝ բուրժուազիան պիտի կանգնէր և կանգնեց հակայեղափոխութեան անշեղ ճանապարհի վրայ, երբ գէպօրի ընթացքը հարկադրում էր նրան «փրկել» յեղափոխութիւնը սոցիալական այն դրոհից, որով մարտական պրոլետարիատը տիրող կարգերին էր սպառնում: Ռուսական յեղափոխութեան այս ուրոյն հանգամանքների կանխատեսութիւնն էր, որ թելազրում էր մեծամասնականներին չտարւել սահմանադրական պատրանքով, այլ փնտռել յեղափոխութեան յազմանակը զինւած ապստամբութեան միջոցով, պրոլետարիատի և դիւզացիութեան ստեղծած քաղաքական օրդանների մէջ: Այն վճռական դերը, որ պատերազմական դրութեան բերումով, վիճակւեց կատարել մեր օրերում յեղափոխական զօրքին, արդարացրեց այն սպասելիքները, որ ունէին մեծամասնականները դինւած ապստամբութեան հեռանկարից: իսկ պատմական այն գերը, որ վիճակւեց կատարել դեմոկրատիայի յեղափոխական օրդաններին՝ Խորհուրդներին՝ առաջադրում էր պրոլետարիատին և դիւզացիութեանն այն

միսսիան, որ վերապահում էին նրանք գրանց լեզ ափոխական գիտելու առ ու ըստ ին:

Անգամ զեմոկրատական յեղափոխութիւնը չէր կարող ստեղծւած պայմաններում պատկւել յաղթական վախճանով, Եթէ յեղափոխական գեմոկրատիային չաջողւէր կոտրել բուրժուազիայի դիմադրութիւնը: Անգամ բուրժուական յեղափոխութիւնը չէր կարող յաղթել Ռուսաստանում այն միջոցներով, որ կարող էր ընծեռել բուրժուազիան որպէս զասակարգի շահերն ամփոփող աքաղաքական տնօթյուն: Սակայն ֆինանսական կապիտալի համաշխարհային գերիշխանութեան ներքոյ և իմպերիալիստական պատերազմի կոնկրետ միջավայրում կտառարող ռուսական ներկայական յեղափոխութիւնն ոչ միայն պիտի կռէր «այլ միջոցներ» բուրժուական իրաւակարգ հասաւատելու համար, այլև, փշրելով այդ իրաւակարգը մարմնաւորող պետական մեքենան, պիտի ստեղծէր քաղաքական նոր միջոց բուրժուական հանրակարգը յաղթահարելու համար: Ներկայ յեղափոխութիւնը իր զարգացման առաջին, անց ման շրջանում կարող էր փրկւել այնչափ, որչափ կամրանպին երկրում, որպէս իշխանութեան միակ աղքակը բուրժուազիան վաղաքական ապահովական կամրանպին էր կամրանպին՝ Պետական Դումա, Ժամանակական կառավարութիւն, Հիմնադիր Փողով և «համապետական»

կամ ահամաժողովրդական» կոչւած այն բոլոր խորհրդակցութիւններն ու հաշարոյթները, որոնց թե՛ք տակ քարշ է գալիս ռուսական ողջ ռէակցիան: Փեարւարեան կառավարութիւնների շրջանում մասրբուրժուաղիսյի «համաձայնողական» հողերանութեամբ վարակւած Խորհրդների անվճռականութիւնը, պայմանաւորւած մասամբ ժողովրդական լայն մասսաների անկազմակերպ ու անդիտակից դրութեամբ և պատմական այն պարագաներով, որ սաեղծւել էին Ռուսաստանի համար պատերազմում նրա կրած ծանր պարտութեան շնորհիւ, առաջացրել էր երկրում մի տյնպիսի տարտամ կացութիւն, որ գալիս էր կասեցնելու յեղափոխութեան յարապատրնթացը և մթաղնելու այն հեռանկարները, որ սնուցանում էին յեղափոխական պրոլետարիատն ու իր կուսակցութիւնը: Կերենսկիի կառավարութիւնը, կատարելով յարական Ռուսաստանի ստանծնած պարտականութիւններն օտարների հանդէպ, իւրացըց հակայեղափոխական ռեպրեսիաների հին պատգամները ներքին կրամորափ դիմաց: Սակայն; վասանդելով յեղափոխութեան յարանուն ընթացը, այս հանգամանքը չէր կարող վերացնել նրա ներքին անհրաժեշտութիւնը և, փոխելով նրա սոցիալական բովանդակութիւնը, անհնարին գարծնել նորանոր նուանումներ յեղափոխութեան այն ուղիով, որ առաջնորդում է պրոլետարիատին դէպ սոցիալիզմ:

Հաստատելով երկրում բանւորադիւղայիշական Խորհրդների դիկտատուրա՝ նոկտեմբերեան յեղա-

փոխութիւնը ոչ միայն անհրաժեշտ արդիւնք պիտի լինէր հասարակական ոյժերի ռէալ դասաւորութեան, այլև վճռական շրջակէտ Ռուսաստանի յարանուն պրոլետարական յեղափոխութեան:

VI.

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը և իր յաղթումեան նախապայմանները

Հոկտեմբերեան յեղափոխութեան յաղթանակը ո՛չ միայն մարտեան կառավարութեան նւիրագործած բուրժուական հասարակութեան դասակարգային ներքին պայքարով էր պայմանաւորւած, այլև ռուս յեղափոխական շարժման մէջ պրոլետարական գենոկրատիայի խաղացած դերի առաջնութեամբ: Ներկայ յեղափոխութեան մէջ նոր և յատուկ իմաստ է ստանում Պլեխանովի հին խօսքը: «ռուսական յեղափոխութիւնը կարող է յաղթել որպէս բանւորական շարժում, կամ չի յաղթիլ բնաւ»: Յեղափոխութեան կոնկրետ նախապայմաններն ու կոնկրետ նպատակներն ակներև են գարձնում ռուս պրոլետարիատի ստանծնած ծանր միստիարք այդ անհրաժեշտութիւնը:

Ռուս յեղափոխութեան առաջ գրւած է ռուս հասարակական-տնտեսական բայցայւած մարմնի վերականգնման բարդ խնդիրը: Ենթաղրել, որ հին կարգերի և իմպերիալիստական պատերազմի առաջցրած բալրայտումը կարող է բուժւել քաղաքական լիբերալիզմի ազգային-պետական սպեղանիով՝ կնշանակէ չըմբռնել խնդրի ամբողջ կարեսրութիւնը, չդի-

տակցել, որ քայըայւող օրդանիզմը կարիք ունի սոցիալական խոր և լուրջ վիրահատութեան: Բուժուական գեներալրատիալի քաղաքական տիրապետութիւնը կոչւած պիտի լինէր ոչ թէ երկրի տնտեսական և քաղաքական կարիքները բաւարարելու, այլ, սրբագործելով արագագական տնտեսական սիստեմ ու կապիտալիստական շահագործութիւնը որպէս քաղաքականութեան ներքին շարժառիթ, նա պիտի աւելի խորացներ այն խոցերը, որ մահացու վասնդ էին սպառնում քայըայւող մարմնի բնականոն գործառնութիւններին: Կանոնած լինելով այս զիտակցութեան առաջ՝ ոռու պրոլետարիատը պէտք է նւամէր երկրում պետական լիակատար իշխանութիւնը, իր վրայ պիտի առնէր հասարակական արտադրութեան և բաշխման բոլոր ճիշդերի հսկողութեան և զեկավարութեան հոգուր: Սա նշանակում է՝ պրոլետարիատը պիտի վերապրէր բուժուաղիալի և նրա մանր-բուժուական համհարզների դէմ ուղղած դաստիարակին լարւած պայքարի հեռանկարներով լցի սոցիալիստական լեզափոխութեան երկունքը: Քանի որ լուծել յեղափոխութեանն առաջադրւած ժանր խնդիրները՝ կնշանակէր ինքնին կազմակերպւած աշխատանքի և սիստեմատիկ օրէնսդրութեան միջոցով սոցիալիստականի վերածել հասարակական արտադրութեան կապիտալիստական այն յարաբերութիւնները, որոնցից վերջին հաշուի, ծայր են առել այդ խնդիրները: Միայն այս հանապարհով է, որ պրոլետարիատի զիկտատուրան նեռասատա-

նում կարող էր ստանալ յեղափոխական դիկտատուրայի ազգային պատմական յատկանիշ: Հաստատելով իր քաղաքական դիկտատուրան որպէս ազգային դասակարգ ոռու պրոլետարիատը միայն այդ հանապարհով կարող էր նոյնացնել իր մասնաւոր գասակարգային շահերը յեղափոխութիւնից ելնող նոր հանրակարգը մարմնաւորող ոռու մողովով աղդապին-քաղաքական շահերի հետ:

Սակայն տնտեսական այն վկուզումը, որի մէջ գոյարւում է իմակերիալիստական պատերազմի ու ֆինանսական կապիտալի մազիներում խրամած ոռու հասարակական մարմինը, ասպարզիւն կգարձնի ոռու պրոլետարիատի այդ հերոսական չտնքերը, եթէ համաշխարհապին իմակերիալիստական պատերազմը չվերածի համաշխարհապին քաղաքացիական կուի, եթէ ոռու բանւորագիւղիսական յեղափոխութիւնը ժայր չտայ միջազգային սոցիալիստական յեղափոխութեան կապիտալիզմի համաշխարհապին կենտրոններում, և եթէ համաշխարհապին այդ յեղաշրջումը նեցուկ չդառնայ սոցիալիստական այն յեղափոխութեան, որի զրօշակն է պարզում այսօր ոռու պրոլետարիատի քաղաքական կտղմակերպութիւնը՝ Ռուսաստանի կոմմունիստական կուսակցութիւնը: Ենթագրել, թէ իմակերիալիստական պատերազմի ելքը կարող է ներդաշնակւել միանգամայն կապիտալիստական տիրող կարգերին՝ կնշանակէր ընտելանալ միանդամոյն այն մաքին, թէ իմակերիալիստական յաղթող սիստեմի ոչժողով պատերազմը վերջ ի վերջով կատարեալ նորտութեան

սլիակի հասցնի պարտւած երկրների ժողովուրդներին և ամենից առաջ ոռւս բանւորութիւնն ու գիւղացիութիւնը: Ուրիշ խօսքով՝ սա կնշանակէր գիտակցել, թէ մանկութեան շէմքին կանգնած, տնտեսական և քաղաքական ամեն կարողութիւնից զուրկ երկրը կամ նրա խոշորագոյն հաստւածները նւաճողի կամքով լուծելու են իրանց հին տնտեսական և քաղաքական կասկերն ու յարաբերութիւնները՝ համաշխարհապին կապիտալի շահագործութեանն ենթակայ գաղութի վիճակին հասնելու համար:

Ոռւս յեղափոխութեան վերջնական յաղթահարումը նախադրում է ոչ միայն անարդյուս բուրժուացիական անկում, այլև համաշխարհային կապիտալի պարտութիւն: Ոռւս յեղափոխութիւնն «ազգային» է, որքան նա կարող է դիտել, որպէս անմիջական արդիւնք ոռւս հասարակական զարգացման ներքին առանձնայատկութեան և անմիջական արծագանգր այդ առանձնայատկութեամբ պայմանաւորւած հասարակութեան հուաբական պահանջների: Սակայն նա միջազգային է ոչ միայն այդ առանձնայատկութիւնը մոնղ ընդհանուր պարագաների բնովթով, այլև այն միջնորդական անդրադարձումներով, որոնցով միայն վերջ ի վերջոյ բաւարարւել կարող են ոռւս յեղափոխութեան «ազգային» պահանջները և լուծել նրան առաջարրւած ինդիրները: Ուստի և, ընդարձակելով այդ յեղափոխութեան մասին Պլեխանովի երբեմն արտասանած նշանաւոր խօսքի իմաստը՝ մենք կարող ենք շեշտել: Ոռւսական յեղափոխութիւնը

կարող է յաղթել որպէս մի չաղթական բանւորական շարժում, կամ չի յաղթիլ բնաւոյ: Ուստի պրոլետարիատը ներկայ յեղափոխութեան դիմուոր մարտ ական ոյժն է. սոկակն նա չէ այն միակ կամ դիմուոր ոյժը, որ պիտի նախորոշի յեղափոխութեան ելքը: Եւ մենք նորից պէտք է յիշենք կենինի մարդարէական նախազգուշացումը, ոռուս յեղափոխութիւնը կարող է յաղթել իր սեփական ոյժերով, բայց նա չի կարող և ոչ մի դէմքուում սեփական ծեռքերով պահել և ամրացնել իւր նւաճումները, նա չի կարող հասնել դրան, եթէ Արևեմուարում տեղի չունենալ սոցիալիստական յեղաշրջումը»*): Համաշխարհային այդ յեղաշրջումը ոռւս յեղափոխութեան ներկայ շրջանում հնարակ կարող է գտանալ ոռուս պրոլետարիատի այն հետևողական ինտերնացիոնալիստական տակահայի շնորհիւ, որի հիմքը ծախակողմեան Ցիմձերվալդն է մշակել: Կոիւ յալտարարելով կապիտալիստական կորգերին Ուուսաստանում, ոռուս պրոլետարիատը միջնորդապէս զտրկ է տալիս սոցիալիստական յեղափոխութեան բոնկմանն ու ծաւալմանն Արևեմուարում: Եւ ընհակառակը, ոռուս պրոլետարիատի համաշխարհային սոցիալիստական յեղափոխութեան մէջ ունենալիք անմիջական մասնակցութիւնն է միայն, որ իր հերթին կոչւած պիտի լինի առ հրաժար և շտութեան վերածելու Ուուսաստանի սոցիալիստական յեղափոխութեան վերջնական յաղթանակը:

*.) „Протоколы Об'единит, Съезда 4-го. 103—4.

Պրոլետարիատից չի կախւած այն մոմենտի ըն-
արութիւնը, երբ նա կարող է իր ձեռքը վերցնել
քաղաքական իշխանութիւնը։ Պատմութեան ըն-
թացըն է, որ գնում է պրոլետարիատին քաղաքա-
կան իշխանութիւնն իր ձեռքն առնելու անհրաժեշ-
տութեան առաջ։ Կամ ոռւս պրոլետարիատը պէտք
է գրաւէր անմիջապէս քաղաքական իշխանութիւ-
նը, — եթէ նա կամենում էր, որ լուծման շաւզի վրայ
զրւէին այն խնդիրները, որ առաջարկել է նրան ոռւս
հասարակական դարդացման ընթացքը, — կամ, ընդհա-
կառակը, նա պէտք է հրաժարէր իշխանութիւնից
և զրա հետ միասին գիտակցօրէն ստորագրէր իր,
որպէս յեղափոխական դասակարգի, մահւան դատա-
վիճուր և խաչ քաշելով (յեղափոխութեան նւանում-
ների) վրայ կամովին փարէր հակայ լզափիոխական
յորձանքին։

Ըստս պրոլետարիատը չէր կարող հաշվի տռնել
իր ծեռնարկի հնարաւոր անյաջողութիւնը, առանց
ի նկատ առնելու գրա հնարաւոր յաղթանակը: Կանգ
չառնելով քաղաքական իշխանութեան զէնքն իր ծեռքը
առնելու անհրաժեշտութեան առաջ՝ պրոլետարի-
ատն ընտրում է յեղափոխութեան յաղթանակի մի-
ակ հնարաւոր ուղին: Յաղթութեան երաշխիքներ
նա փնտում է նախ և առաջ իր խսկ յեղափոխա-
կան ոյժի մէջ: Եւ եթէ այդ ոյժն ինքնին բացար-
ձակ գրաւական չի ընծեռում պալքարի բարեկաշող
ելքի համար՝ դա գեռ չի կարող թույլացնել պրոլե-

տարիատի լեզուիոխական կամքը դեպ եր ձեռնարկի
բաղարձակ յաղթանակը:

Անդամ միշտապիկին պլողետարիատի տեսակէ-
տից՝ համաշխարհային սոցիալիստական յեղափոխու-
թիւնը նախ և առաջ միակ ցանկալի և միակ հնա-
րաւոր ելքը կարող է լինել կապիտալիզմի ծնած այն
բոլոր հակամարտ ոյժերի բաղման, որ օրհասական
արտապայտութիւն է գտել համաշխարհային բուրժու-
ազիայի նիւթած իմպերիալիստական պատերազմի
մէջ։ Հարց կարող է լինել միայն այն մասին, թէ Երբ
կամ որպիսի յաջողութեամբ կարող է սկսել և ըն-
թանալ համաշխարհային բազաքացիական պատերազ-
մը ժամանակակից կապիտալիզմի խոշոր կենտրոննե-
րում։ Սակայն ազդ հարցին ևս պլողետարիատ պէտք
է մօտենալ ոչ միայն Երեսովթների արտաքին ըն-
թացքն առարկայօրէն դիտողի գերում, այլ դրա
հնարաւոր ելքն իր դասակարգալին շահերի բերու-
մով գործնականապէս վճռողի գերում։ Այս դիտակ-
ցութիւնն են ունեցել յեղափոխական պլողետարիա-
տի մեծամասնական առաջնորդները սկզբից և եթ։
«Ոչ ոք կարող է զրաւական տալ՝ զրում եր վետր-
ւարեան յեղափոխութիւնից զեռ մի տարի առաջ
մեծամասնականների կենտրոնական օրգանը՝ Ժրնեի
«Սոցիալ-դեմոկրատ»-ը՝ (№ 51 29 փевր. 1916)

Ճենք գնում ենք այս ճանապարհով, կամ դատապարտւած ենք իմպերիալիստների սարուկը լինելու և բնդունակ միայն կոտորւելու հարիւր հաղարներով, հենց որ լու ի իմպերիալիստական վոհմակի հրամանը»:



